ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԷԴՈՒԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն անվանի արձակագիր, գրող, հրապարակախոս, թարգմանիչ Էդուարդ Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.48 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷԴՈՒԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անվանի արձակագիր, գրող, հրապարակախոս Էդուարդ Ավագյանը ծնվել է 1927 թվականի օգոստոսի 19-ին, Թիֆլիսում:

1952 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է «Գիտելիք» ընկերությունում՝ որպես դասախոս: 1953-1954 թվականներին հայոց լեզու է դասավանդել Մոսկվայի գրողների միության կենտրոնական տանը կազմակերպված թարգմանիչների խմբակում: 1954 թվականից աշխատանքի է անցել Հայպետհրատում՝ որպես սրբագրիչ, ապա՝ խմբագիր: Աշխատել է «Սովետական գրող» հրատարակչությունում որպես մանկապատանեկան խմբագրության ավագ խմբագիր: Եղել է «Արևիկ» մանկապատանեկան հրատարակչության խմբագիր, Երևանի պատմության թանգարանում՝ ավագ գիտաշխատող: 2001-2006 թվականներին եղել է Հայաստանի գրողների միության մանկապատանեկան գրականության մասնաճյուղի նախագահը:

Էդուարդ Ավագյանը հեղինակ է չափածո և արձակ գործերի, գրել է նաև մանուկների համար, մշակել հայ ժողովրդական մանկական բանաստեղծություններ: Թարգմանություններ է կատարել Պետրարկայի, Նիկոլայ Նեկրասովի, Ջեկ Լոնդոնի, Վիկտոր Կոչևսկու, Ալեքսանդր Պուշկինի, Ալեքսանդր Բլոկի և այլ մարդկանց ստեղծագործություններ:

Արժանացել է Հայաստանի գրողների միության Դերենիկ Դեմիրճյանի և Վախթանգ Անանյանի անվան մրցանակների, «Հայ գրականության բարեկամներ» միության՝ Սիմոն Սիմոնյանի անվան մրցանակի և այլն:

Էդուարդ Ավագյանը մահացել է 2010 թվականին:

Անվանի արձակագիր, բանաստեղծ Էդուարդ Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.48 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի և Էդուարդ Ավագյանի դուստր՝ ՀՀ ժուռնալիստների միության անդամ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիա Ավագյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷԴՈՒԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Էդուարդ Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷԴՈՒԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Էդուարդ Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ